ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ*

Ե. Պ. ԱՂԱՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ռուսաստանի դերը հսկայական է բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի պատմական բախտում։ Այն օրից, երբ հայ ժողովրդի պատմական ուղին համընկավ իր մեծ բարեկամի՝ ռուս ժողովրդի ուղու հետ, նա ոչ միայն հնարավորություն ստացավ ապահովելու իր վտանգի ենթարկված գոյությունը, այլև մասնակից դարձավ պատմական խոշոր իրադարձությունների։

Հայ ժողովրդի կյանքում XIX դ. ամենակարևոր փաստը Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին։ Մեր ժողովուրդը այժմ պատրաստվում է տոնելու այդ կարևոր իրադարձության 150-ամյակը։ Այժմ, երբ այդ կարևոր իրադարձության պատմական նշանակության լույսի տակ հայացք ենք ձգում դեպի հեռավոր անցյալը, առավել ակնառու է դառնում ռուս մեծ ժողովրդի խաղացած դերը հայ ժողովրդի կյանքում։

Ռուսաստանի կապերը Անդրկովկասի հետ գալիս են դարերի խորքից։ Ռուս ականավոր պատմաբան Բ. Գրեկովը նշում է, որ սլավոնները շփվում էին Կովկասի ժողովուրդների հետ դեռևս մ. թ. ա. VI—V դդ.։ Անանիա Շիրակացին իր «Աշխարհացույցում» նշում է Հյուսիսի 25 սլավոնական ցեղերի մասին։ Տեղեկություններ են պահպանվել նաև, որ 852 թ. հայերը խալիֆայության դեմ կռվելիս սլավոնների օգնությանն են դիմել։ Մովսես Կաղանկատվացին հիշատակում է Աղվանքում ռուսների վրա արաբների հարձակման մասին և նշում, որ ռուսները անպարտելի էին։ X դ. պատմիչ Մովսես Դասխուրանցին ևս հիշատակում է ռուսների մասին, իսկ Գրիգոր Տուդեորդին (XII դ.) գտնում էր, որ հայերը օգնության համար ոչ թե պետք է Հռոմին դիմեն, այլ «ռուզաց»։

Ռուսների և Ռուսիայի մասին տեղեկություններ ենք գտնում Վարդան Մեծի, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Ֆրիկի և ուրիշների մոտ։ X—XI դդ. ռուսական տարեգրություններում հիշատակվում է Արմենիա երկիրը։ Ռուսական աղբյուրներում հիշատակումներ կան Մեծ և Փոքր Հայքի մասին։

Իվան III վերջ դնելով մոնղոլական լծին և ստեղծելով միավորված պետություն, ամեն կերպ աշխատում էր կապերն ամրապնդել Կովկասի ժողովուրդների հետ։ Աղբյուրագիտական նյութերը հաստատում են, որ արդեն XV դ. Ռուսաստանի ազատագրական միտքն Անդրկովկասի ժողովուրդների մեջ լայն տարածում էր գտել։ Մոսկովյան պետությունը սկսած XV—XVI դդ.

---

* *Զեկուցում, կարդացված ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում, 1974 թ. դեկտեմբերի 12-ին։*

հայ բանահյուսության մեջ հիշատակվում է որպես արևելքի ժողովուրդների ազատագրական շարժումների հովանավոր։

Հատկապես XVI—XVII դդ. հայերի և վրացիների կապերը Ռուսաստանի հետ առավել շոշափելի են դառնում։ Ռուսաստանի՝ դեպի հայերը ցուցաբերած համակրանքի արդյունք էր այն, որ 1660 թ. Ջուլֆայի առևտրականները Զաքարև Սահրատովի գլխավորությամբ, արտահայտելով իրենց երախտագիտությունը, Մոսկվայի արքունիքին նվեր բերեցին ադամանդապարդ գահ, որի վրա կատարված մակագրության մեջ ասված էր. «մեծագույն արվեստով ու եռանդով պատրաստված այս գահը թող լինի դալիքի բախտավոր նախանշանակ...»։

Շուտով, 1667 թ., Ռուսաստանի և հայկական առևտրականների միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն ռուսական կառավարությունը արտոնյալ պայմաններ էր տալիս հայ առևտրականներին՝ Ռուսաստանի և Արևելքի միջև տնտեսական-առևտրական կապերը զարգացնելու համար։ Անդրկովկասի նկատմամբ Ռուսաստանի գործադրած ամեն մի քայլը ազատագրական պայքարի նոր ալիք էր առաջացնում։ XVII դ. կեսերից Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացման հետ ուժեգանում են ազատագրական շարժումները Անդրկովկասում։

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ինքիրը կենսական հարց էր, որը ձևավորվել է երկարատև պայքարի ընթացքում։ Դրան նպաստել են Ռուսաստանի հետ կատարվող առևտրական-տնտեսական և քաղաքական կապերն ու հարաբերությունները։ Այդ հարաբերությունների զարգացումը հանգեցրեց Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման ծրագրի ձևավորմանը, ծրագիր, որի ակտիվ ստեղծողներից էր Իսրայել Օրին։ Օրին էր, որ 1701 թ. Մոսկվայում պաշտոնապես հաստատեց այդ ծրագիրը և նրան գործնական բնույթ տվեց։ Օրին Պետրոս I ներկայացրեց հայ մելիքների 1699 թ. ապրիլի 29-ին կազմած դիմումը, որով նրանք խնդրում էին օգնել հայ ժողովրդին, ազատագրվելու պարսկական լծից։ «Մեր նպատակն է,— գրում էին դիմումի հեղինակները,— որ մեր ողջ ժողովուրդը, մեծ և փոքր, անցնեն Ձերդ գերազանցության իշխանության ներքո...»։ Օրին այն համոզմանն էր, որ Թուրքիայի դեմ ազատագրական պայքարի դուրս կգան ոչ միայն հայերը, այլ նաև վրացիները, հույները, քրդերը, արաբները, սիրիացիները և ուրիշներ։ Նա հատկապես հույս էր կապում հայ-վրացական, Ադրբեջանի Ֆաթալի-խանի դաշնակցության և Հարավային Ադրբեջանում Սուլեյման-Բաբի գլխավորությամբ բարձրացող հակապարսկական ապստամբության վրա։ Իսրայել Օրու մահվանից հետո (1711 թ.) նրա գործը շարունակեցին Մինաս վարդապետը, Եսայի Հասան Ջալալյանը, Իվան Կարապետը և ուրիշներ։

Հայ-ռուսական տնտեսական-առևտրական, քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունները անցել են զարգացման մի շարք էտապներ. առաջինը սկսվում է Կիևյան Ռուսիայից և տևում է մինչև XVI դ., երկրորդը՝ մինչև XVII դ. 60-ական թվականները, երբ այդ կապերը ավելի ամրապնդվում և կազմակերպված բնույթ են ստանում։ Երրորդը սկսվում է 1660-ական թվականներից, երբ հայերի ռուսական կողմնորոշումը ավելի լայն բնույթ է ստանում և Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելը ավելի իրական հիմքերի վրա է դրվում։ Հաջորդ էտապում, հատկապես XVIII դ. վերջին և XIX դ. առա-

ջին բառորդում ուժեղ դայքար է ծավալվում հայ-ռուսական հարաբերությունների խորացման և Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ թուրք-պարսկական լծից ազատագրելու ծրագրի իրականացման համար։

Ռուսական պետությունը, հատկապես Պետրոս I օրոք, մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում այն բանում, որպեսզի հայ առևտրականները Հնդկաստանից ու Պարսկաստանից դեպի Եվրոպա իրենց գործարքները կատարեին ոչ թե Հալեպի և Զմյուռնիայի, այլ Կասպից ծովի և Վոլգայի վրայով։ Այդ են ապացուցում Պետրոս I 1711 թ. մարտի 2-ի հրամանագիրը և նույն թվականի մայիսի 14-ի սենատի ընդունած որոշումը։ Պետրոս I ուղղակի ցուցում էր տալիս «հայերին սիրաշահել, ամեն կերպ աջակցել և շահագրգռել Հաշտարակի մեզ մոտ գալու»։

1718 թ. ռուսական դեսպան Վոլինսկին Շեմախիում կապ է հաստատում տեղի և Գյանջայից նրան այցելած հայ առևտրականների հետ, խոստանում լավագույն պայմաններ ստեղծել նրանց համար Ռուսաստանի հետ առևտրական կապերը ուժեղացնելու, մետաքսի հումք այնտեղ փոխադրելու պայմանով։ Իմանալով հայերի նվիրվածությունը Ռուսաստանին՝ Պետրոս I Վոլինսկուն հրահանգել էր «ուսումնասիրել հայ ժողովրդի վիճակը, նրա քանակը և բնակվելու վայրերը... սիրալիր վերաբերմունք ցուցաբերել նրանց նկատմամբ և դրավել Ռուսաստանի կողմը»։ Վոլինսկին Պարսկաստանում շահի չինովնիկների հետ հանդիպման ժամանակ իր դժգոհությունն է հայտնում հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների առթիվ։ «Ջուլֆացիների կանանց ու երեխաներին հն խլում և ստիպում են հավատափոխ լինել»։

Վոլինսկին Պարսկաստանում և Անդրկովկասում կարևոր դիվանագիտական գործունեություն ծավալեց։ Նա հանդիպումներ ունեցավ Մինաս վարդապետի, վրացական թագավոր Վախտանգ VI ներկայացուցիչ Փարսադան-բեկի և ուրիշների հետ ու լիովին համոզվեց, որ Անդրկովկասի ժողովուրդները կողմնորոշվում են դեպի Ռուսաստան։ Այդ նույն կարծիքն էր հայտնում Գանձասարի Եսայի կաթողիկոսը Պետրոս I ուղղված 1716 թ. օգոստոսի 13-ի նամակում, տեղեկացնելով, որ Ղարաբաղի հայերը օգնություն են խնդրում և պատրաստ են իրենց բոլոր ուժերով աջակցել ռուսական զորքերին։ Պետրոս I հղած նամակում Մինաս վարդապետը հավաստում էր, որ Պարսկաստանում գտնվող երկու հարյուր հազար հայությունը պատրաստ է «ամբողջովին նորին մեծություն կայսրի կողմն անցնել»։ Վոլինսկին տեղյակ էր նաև այն մասին, որ Ռուսաստանի հովանու տակ անցնելու ցանկությունը ուժեղ էր ոչ միայն քրիստոնյաների, այլ նաև Շեմախիի մահմեդական բնակչության մեջ։ Այդ նույն միտքն է հաստատում նաև հոլանդական ճանապարհորդ Կարնելի-դե Բրուինը։ Նա 1707 թ. այցելելով Շեմախի գրում է, որ տեղի բնակիչները աղոթում են, որ ռուսները վերցնեն Շիրվանը։

Պետրոս I հավանություն տալով Վոլինսկու գործունեությանը, նրան նշանակում է Աստրախանի նահանգապետ՝ հանձնարարելով շարունակել կապերը Վախտանգ VI և Անդրկովկասի մյուս գործիչների հետ։

Այդ ժամանակաշրջանում միջազգային բարդ իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասում։ Պարսկաստանը քաղաքական ծանր ճգնաժամ էր ապրում։ Թուրքիան պլաններ ուներ զավթումներ կատարել մինչև Մերձկասպյան շրջանները։ 1721 թ. Թուրքիայի հրահրանքով Դաղստանի ֆեոդալ Դաուդ-բեկը

ու Կայիկումիկի տիրակալ Սուրխայ խանը ներխուժեցին Շիրվան և թալանեցին ռուս առևտրականներին, ավերածության ենթարկեցին Անդրկովկասի շատ շրջաններ։ Դա առիթ ծառայեց Պետրոս I Մեծի կասպյան արշավանքի համար։ Ռուսական բանակի արշավանքը Անդրկովկասի բոլոր ժողովուրդների մեջ հսկայական վերելք առաջացրեց։ Հայերը, վրացիները և ադրբեջանցիները անհամբեր սպասում էին ռուսական զորքի ժամանելուն։ Բաքվի բնակիչները 1722 թ. օգոստոսի 22-ին, երբ ռուսական զորքերը դեռ Դերբենդի շրջանում էին, Պետրոս I գրած նամակում նշում էին, որ իրենք ատում են շահի կողմնակիցներին և անհամբեր սպասում են ռուսներին։

Պետրոս I սակայն ստիպված էր զգույշ քաղաքականություն վարել։ Մի կողմից անհրաժեշտ էր կանխել Թուրքիայի արշավանքը դեպի Մեծկասպյան շրջանները, մյուս կողմից անժամանակ էր և անցանկալի պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ, քանի որ Անգլիան ու Ֆրանսիան Ռուսաստանի դեմ դավեր էին նյութում և, բացի այդ՝ Ռուսաստանի վրա ծանր էր նստել Հյուսիսային պատերազմը։ Դրա համար էլ ռուսական զորքերը 1722 թ. Դերբենդից նահանջեցին Աստրախան։ Սակայն 1723 թ. ծովային էքսպեդիցիան, գեներալ Մատյուշկինի գլխավորությամբ, այնուամենայնիվ, գրավեց Բաքուն, որը Պետրոս I համարեց «բոլոր գործերի բանալին»։ Ռուսական զորքերը հասան մինչև Գիլան։ Պարսկաստանը հաշտություն խնդրեց։ 1723 թ. սեպտեմբերի 12-ի պայմանագրի համաձայն Ռուսաստանին էին անցնում Դերբենդը, Բաքուն, Գիլանը, Սազանդարանը և Աստրաբադը։

Ի պատասխան հայ ժողովրդի բազմաթիվ գիմումների՝ Պետրոս I դեսպան Իվան Կարապետը հատուկ հանձնարարությամբ այցելեց հայկական շրջանները՝ հայտնելու, որ Ռուսաստանը միշտ էլ պատրաստ է պաշտպանելու հայ ժողովրդին։ Էջմիածնից Հովսեփ վարդապետը իր պատասխան նամակում խնդրում է հայտնել Իվան Կարապետին, որ հայ ժողովուրդը իր փրկությունը կապում է Ռուսաստանի հետ։ Նա միաժամանակ խնդրում է իր նամակն ուղարկել ռուսական արքունիք, որպեսզի լրիվ համոզմունք լինի հայերի ռուսական կողմնորոշման հարցում։

Ռուսաստանի թափանցումը Մեծկասպյան շրջանները հսկայական վերելք առաջացրեց և ազատագրման նոր հույսեր ներշնչեց հայ ժողովրդին։ Ղարաբաղում, Սյունիքում և Երևանում ազատագրական պայքարի նոր ալիք բարձրացավ։ Գյանջայի ադրբեջանցիները Իվան Կարապետին հրավիրում են իրենց մոտ, որպեսզի թուրքական զորքերը չհամարձակվեն իրենց քաղաքը մտնելու։ Իսկ Վախտանգ VI, ստանալով ռուսական պատվիրակության ժամանման լուրը, հրահանգ է ուղարկում հայկական զորքերի հրամանատարներին՝ արժանավայել կերպով ընդունել նրան։

Դավիթ Բեկի գլխավորած պայքարի ժամանակ հայ-վրաց և ադրբեջանական ժողովուրդների միասնական ճակատ ստեղծվեց։ Դրա փայլուն վկայությունն է Գյանջայից ոչ հեռու, Զոլագ կոչվող վայրում վրաց-հայկական զորքերի միավորումը Վախտանգ VI-ի գլխավորությամբ, Գյանջայի ադրբեջանցիների ու Ղարաբաղի հայերի միջև բարեկամության և Թուրքիայի դեմ համատեղ պայքարի պայմանագիր կնքելը։

Պետրոս I-ի Մեծկասպյան արշավանքը կարևոր նշանակություն ունեցավ հայ ազատագրական շարժումների վերելքի համար։ Այդ շարժումների

անհաջողությունը ոչ միայն չսասանեց հայ ժողովրդի հավատը Ռուսաստանի նկատմամբ, այլև ամբողջ XVIII դ. հայ ժողովրդի կողմնորոշումը դեպի Ռուսաստան ավելի ու ավելի ամրապնդվեց, իսկ Ռուսաստանի արտաքին քաղաքական պլաններում Անդրկովկասը սկսեց դրավել առաջնակարգ տեղ։ Հայ գործիչները սերտ կապերի մեջ մտնելով ականավոր զորավար Սուվորովի հետ, պլաններ էին մշակում Անդրկովկասը ազատագրելու վերաբերյալ։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք տարան Հովսեփ Արղությանը, Հովհաննես Լազարյանը և ուրիշներ։ Նշանակալից էր նաև Մադրասի հայրենասերների խմբի գործունեությունը, որը նույնպես հայերի ազատագրությունը կապում էր Ռուսաստանի օգնության հետ։

Հայ ազատագրական շարժման ղեկավարները Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագրում հանգես էին բերում տարբեր կարծիքներ։ Մի մասը նոյատակ էր դնում Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծել հայկական պետություն, մյուս մասը՝ միացյալ վրաց-հայկական պետություն, երրորդը՝ Հայաստանը ուղղակի Ռուսաստանի կազմի մեջ միավորելու ծրագիր էր առաջարկում։

Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու խնդրում հնդկահայ և արևելահայ գործիչները միասնական կարծիք ունեին։ Սակայն ապագա Հայաստանի պետական կարգի վերաբերյալ նրանց տեսակետները տարբերվում էին։ Եթե հնդկահայ հայրենասերների խումբը կողմնակից էր պառլամենտական սահմանադրական կարգ ստեղծելուն, ապա Արղությանն ու Լազարյանը ֆեոդալական միապետական կարգի կողմնակից էին։ Դրանում արտահայտվում էին ժամանակի քաղաքական զարգացման տենդենցները։

Հայ հասարակական-քաղաքական գործիչները ելնում էին ժամանակի ոնալ պայմաններից, ոչ միայն հայ ժողովրդի ներքին դրությունից, նաև Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի միջազգային դրությունից, նրանց շահերի բախումներից ու շահագրգռությունից։ Նրանք հասկանում էին, որ հզորացող Ռուսաստանի շահերը Սև ու Կասպից ծովերի սահմաններում բախվում են Թուրքիայի և Պարսկաստանի հետ, ուստի և հույս էին տածում, որ Անդրկովկասի ժողովուրդները կազատագրվեն և ավելի առաջավոր պետության կազմի մեջ կլինեն, քան ռազմա-ֆեոդալական հետամնաց Թուրքիան ու Պարսկաստանն էին։ Իսկ Ռուսաստանը, հանձինս Անդրկովկասի ժողովուրդների, տեսնում էր իրեն նվիրված կարևոր ուժ։ Այսպիսով Ռուսաստանի ազդեցությունը տարածելու համար նպաստավոր հող էր ստեղծվում։

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործում կարևոր դեր էր խաղում հայ ժողովրդի դարավոր բարեկամ Վրաստանը, որին հաջողվել էր պահպանել իր պետականությունը։

XVIII դ. վերջերին վրաց թագավոր Գեորգի XII, հաշվի առնելով երկրի ծանր վիճակը, խնդրում է Ռուսաստանին օգնության ձեռք մեկնել և Վրաստանը միացնել Ռուսաստանին։ 1801 թ. Վրաստանը հատուկ հրովարտակով միացվեց Ռուսաստանին։ Միաժամանակ Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի Լոռի-Փամբակի և Շամշադինի շրջանները։ Այդ պատմական փաստով առավել իրական հիմք ստեղծվեց Հայաստանը Ռուսաստանին միանալու համար։ 1804 թ. գեներալ Ցիցիանովի արշավանքը Երևանն ազատագրելու համար հաջողություն չունեցավ։ Թուրքական գործակալության հրահանգով լեռ-

նականների բարձրացրած ապստամբության հետևանքով ռուսական զորքը ստիպված էր թողնել Երևանի պաշարումը և ետ նահանջել։ Սակայն Շորագյալը և Վրաստանին սահմանակից մի շարք հայկական բնակչությամբ շրջաններ միացան Ռուսաստանին։ Ամենուր հայերը աղ ու հացով էին դիմավորում ռուս զինվորներին՝ իրենց ազատարարներին, նշանակալից թվով հայ ընտանիքներ անցնում էին Ռուսաստանին միացված շրջանները։

Երևանի գրավման երկրորդ արշավանքը սկսվեց 1808 թ. սեպտեմբերին, գեներալ Ի. Գուդովիչի գլխավորությամբ։ Երևանը պաշարվեց։ Թեհրանից ֆրանսիական միսիայի ղեկավար, գեներալ Գարդանը ուղարկել էր զինվորական մասնագետներ՝ Երևանի բերդը ամրապնդելու։ Թեև ռուսական զորքերին օգնելու նպատակով ստեղծվել էին պարտիզանական խմբեր ու ջոկատներ (օրինակ՝ Գրիգոր Մանուչարյանի և Ռոստոմ Աբովյանի գլխավորած ջոկատները, վրաց ու ադրբեջանական հեծելազորը), սակայն այս անգամ էլ չհաջողվեց ազատագրել Երևանը։ Ռուսական զորքերի նահանջից հետո ավելի ուժեղացան ճնշումները ու հալածանքները։ Երևանի հայ և ադրբեջանցի բնակիչների կողմից գրված մի փաստաթղթում նշված է. «եթե հաղորդելու լինենք այն բոլոր հալածանքները, որ մենք ենք տանում, ապա դրա համար չի բավականանա թուղթ ե թանաք»։ Բնակչության մի մասը փրկվեց, ռուսական զորքի հետ տեղափոխվելով Լոռի-Փամբակ։

1805 թ. Շիրակի բնակիչները գիմում են ռուսական զորամասին, խնդրելով ռուսական զորքի շտապ օգնությունը. «մենք սպասում ենք անհապաղ օգնության, եթե հապաղեք, մեզ տեղահան կանեն և կոչնչացնեն»։ Գեներալ Նեսվետաևի զորամասը, ընդառաջելով բնակչության աղերսանքներին, նույն թվականի ամռանը Շիրակը միացրեց Ռուսաստանին։ 1806 թ. Նեսվետաևին տեղեկացնում են, որ Բայազետից մոտ 10.000 հայեր ուզում են անցնել Ռուսաստանի իշխանության տակ։ Գեներալ Նեսվետաևը գլխավոր հրամանատար Գուդովիչին 1806 թ. սեպտեմբերի 6-ին գրած նամակում նշում է. «Երևանի բոլոր բնակիչները ցանկանում են ռուսների գալը»։ Գուդովիչը 1807 թ. մարտի 10-ին ռազմական գործում աչքի ընկածների թվում նշում է նաև Միրզա Գրիգորյանի, Հովհաննես Հարությունյանի և այլ հայերի անունները։ Այդ նույն ժամանակ պարտիզան Վանի Արաբեկյանի ջոկատի օգնությամբ գնդապետ Կարյագինի զորամասը Ղարաբաղը միացրեց Ռուսաստանին։

Ռուսական բանակը անգամ Նապոլեոնի արշավանքի ծանր տարիներին մեծ զոհաբերություններով պաշտպանում էր Անդրկովկասը։ 1812 թ. գեներալ Կոտլյարովսկու հրամանատարությամբ ռուսական զորքերը պարտության մատնելով պարսկական բանակին, ստիպեցին Աբաս-Միրզային հաշտություն խնդրել։ Կնքվեց 1813 թ. Գյուլիստանի պայմանագիրը, որի համաձայն Անդրկովկասի զգալի մասը՝ Դաղստանը և Վրաստանը, Հյուսիսային Ադրբեջանը, Շամշադինը, Ղարաբաղը, Շորագյալը, Փամբակը մտան Ռուսաստանի կազմի մեջ։ Երևանը և Հայաստանի մեծ մասը շարունակում էր հեծել թուրք-պարսկական լծի տակ։

Անգլիական դիվանագիտությունը ամեն կերպ արգելակում էր այդ պայմանագրի իրագործումը։ Դեռ 1810 թ. Անգլիան Պարսկաստանի շահի թույլտվությունն էր ստացել Կասպից ծովի հարավային ափում կառուցել ռազմական նավեր, իսկ 1814 թ. պայմանագրով նա խոստացել էր ստիպել Ռուսաս-

տանին՝ վերանայելու Պարսկաստանի սահմանների հարցը։ Արևմտյան տերությունները նախապատրաստեցին Պարսկաստանի և Թուրքիայի միջև 1823 թ. պայմանագրի կնքումը՝ նրանց հրահրելով պատերազմ սկսելու Ռուսաստանի դեմ։ Եվ ահա 1826 թ. Աբաս-Միրզան, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեց Անդրկովկաս։ Հայ աշխատավորները այս անգամ ևս ցույց տվեցին չտեսնված սխրանքներ։ Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Շուշիի բերդի 48-օրյա պաշտպանությունը, գեներալ Մադաթովի Շամխորի մոտ թշնամուն տված ջարդը, Վանի Աթաբեկյանի ռուսական բանակին ցույց տված մեծ ծառայությունը և այլն։ «Անդամ կանայք,— գրում է ռուս պատմարան Վ. Պոտտոն,— հանդես էին գալիս որպես հերոսուհիներ, և նրանցից մեկին՝ Խաթայի անունով, այն ժամանակ ճանաչում էին ամբողջ Ղարաբաղում»։

1827 թ. գարնանը ռուսական զորքերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ շարժվեցին Երևան։ Ռուսական զորքերի Արարատյան դաշտում երևալը մեծ խանդավառություն առաջացրեց հայ բնակչության մեջ։ Գրավելով Սարդարապատը, ռուսական զորքերը պաշարեցին Երևանը։ Հայ գյուղացիներից 1827 թ. մարտին կազմված կամավորական ջոկատն իր կազմում ուներ 1000-ից ավելի մարտիկներ, որոնք հերոսաբար օգնում էին ռուսական զորքերին։

Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանը 1827 թ. մայիսի 15-ին Թիֆլիսում հայ կամավորական գնդի առջև արտասանած ճառում ընդգծում էր, որ պայքար է գնում հայ ժողովրդի կենաց ու մահու համար։ Այդ բանը լավ գիտակցում էին հայ հայրենասերները։ Պարտքի զգացումը համակել էր ամեն մի մարտիկի։

1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը գրոհով վերցրին Երևանը։ Նրանց շարքերում հերոսաբար մարտնչում էր հայկական կամավորական ջոկատը։ Այդ մարտերին մասնակցում էին բազմաթիվ հայեր։ Գրոհի ժամանակ զոհվեց ժողովրդական հերոս Աղասին, որը դարձավ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հերոսը։

Այդ օրը հայ ժողովրդի համար նոր արև ծագեց։ Փրկվեց հայ ժողովրդի արևելյան հատվածը, որի շուրջը սկսեցին համախմբվել հայ ժողովրդի ցիրուցան եղած բեկորները։ Սկիզբ առավ հայ ժողովրդի համախմբման պրոցեսը։ Արարատյան դաշտը նորից հնարավորություն ստացավ շունչ ու հոգի տալ անկման շեմին կանգնած հայերին։ Այդ հաղթանակը վավերացվեց 1828 թ. փետրվարի 22-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրով, որի համաձայն Արևելյան Հայաստանը առհավետ միացավ Ռուսաստանին։ Ռուս ականավոր գրող, պատերազմի մասնակից Ա. Գրիբոյեդովը իր օրագրում այդ օրերին գրել է, որ ռուսները ազատագրելով հայ գյուղացիներին, ամենահումանիստական պատերազմն են մղում։ Դեկաբրիստ Ե. Լաչինովը նկարագրում է, թե ինչպես ազատագրված հայ գյուղացիները, երեխաները, կանայք ու ծերերը ձեռքները պարզած վազում էին դեպի ռուս զինվորները և աղոթում նրանց համար, որպես իրենց ազատարարի։

Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան ներգաղթած հայերը, թվով ավելի քան 130 հազար, բազմացրին հայ բնակչությունը այն մասում, որն այժմ հայ ժողովրդի վերածննդի բնօրրանն է, նրա լուսավոր փա-

ռոսն ու ապահով հայրենիքը։ Հայտնի է, որ Թուրքմենչայի պայմանագրի նախնական տեքստում ներգաղթի մասին հիշատակում չկար և այն մտցվեց Գրիբոյեդովի ջանքերով։ Գրիբոյեդովի կազմած մի փաստաթղթում այն կարծիքն էր հայտնվում, որ Հայաստանի աղատագրումը պարսկական լծից կարելի է ավարտված համարել միայն այն դեպքում, եթե այնտեղ «բազմապատկվի հայերի թիվը։ Այդ բանին հասնելու համար անհրաժեշտ է ռուսական բանակի գրաված շրջանների՝ Տավրոսի, Խոյի, Սալմաստի, Մարաշի բոլոր հայերին վերաբնակեցնել Նախիջևանի, Երևանի և Ղարաբաղի մարզերում։ Նրանց նրկատմամբ, ովքեր իրենց անհեռատեսության պատճառով ընդունակ չեն գիտակցելու ռուսական տիրապետության տակ սպասվելիք բարվոք վիճակը, պետք է իրագործվի «ողջամիտ հարկադրանք»։

Հայ հասարակական միտքը և ականավոր դործիչները բարձր գնահատեցին Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու իրադարձության նշանակությունը։ Խաչատուր Աբովյանը մեծ խորհուրդով նշում է, որ այն օրից, երբ Հայաստանը կորցրել է իր փառքը, երբ հայերը թշնամու դեմ սրի փոխարեն իրենց գլուխն են դրել, նրանք չեն տեսել նման երջանիկ օր, չեն ապրել նման ուրախություն։ Հայաստանի միանալը Ռուսաստանին նա համարել է «երջանիկ դար», «հրաշալի գարուն», նոր արշալույս հայ ժողովրդի համար։ Նա երազում էր, որ Ռուսաստանի օգնությամբ միավորելով օտարության մեջ թափառող հայերին, Հայաստանը կապրի իր վերածննդի էպոխան։ «Ռուս անունը,— գրել է Աբովյանը,— պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես նրա արյունը, որով մենք աղատվել ենք ընդմիշտ, նույնպես սուրբ պետք է լինի նրա կամքը, որի ներքո մենք ապրում ենք, կատարելապես պաշտպանված լինելով մեր հավատքի և հայրենիքի բոլոր թշնամիներից։ Աշխատենք ըստ մեր կարողության ու հնարավորության ձեռք բերել օգտավետ գիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտություն և բարի քաղաքացիներ լինել։ Սրանով, հենց միակ սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն...»։ Աբովյանը Հայաստանը պարսկական լծից ազատվելը համեմատում է գժոխքի անկման հետ։ «Դժոխքի քանդվելը մեղավորների համար էս դինր չէր ունենալ, ինչպես Երեվանու բերդի առնիլը հայերի համար...»։ Եվ ապա նա բացականչում է. «Հայք ե՞րբ կարեն ռուսաց արած մոռանալ, քանի որ շունչ ունին»։

Արևելյան Հայաստանի ազատագրման կապակցությամբ ցնծություն էր տիրում աշխարհի բոլոր ծայրամասերում գտնվող հայերի շրջանում։ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում կայացած բազմամարդ ժողովում Մ. Թաղիադյանը իր ճառում կոչ էր անում բոլոր հայերին վերադառնալու Հայաստան և ուրախության արցունքներով հայրենիքի փրկված հողը համբուրել։ Կալկաթայի հայերը իրենց նամակում հույս են հայտնում, որ շուտով օտարության մեջ զրկանքներ կրող հայերը կվերադառնան Արարատյան երկիր, նրանք այլևս թափառելու պատճառ չունեն, քանի որ նրանց իր դիրկն է հրավիրում Ռուսաստանը։ Կալկաթայի հայկական համայնքի 1829 թ. փետրվարի 8-ի նամակում նշվում է, որ երկարամյա դաժան ձմռանը փոխարինել է ազատությունը. «արթնացիր Խորենացի, հայր մեր,— կոչում էին նրանք,— արթնացիր և տես քո երկրի հրաշալի փոփոխությունը, որի ազատության ե հանգստի կորուստն էիր դու ողբում»։

Պատերազմի մասնակից, դեկաբրիստ Լաչինովը 1827 թ. գրել է. «Հասել է Հայերի վերածննդի ժամը, և գուցե, մի քանի դարյա մութ քնից հետո, նորից կարթնանա Հայաստանի համար գիտության, արհեստների ու արվեստի ծաղկուն դարը, որոնց Երևանի մարզով մեկ փռված հուշարձանները այժմ էլ տեսնողին հիացմունք են պատճառում»։

Հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչները միևնույն գնահատականն են տվել Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմական իրադարձությանը։ Պատմաբան Ա. Երիցյանը իրավացիորեն գտնում էր, որ XIX դ. ոչ մի քաղաքական երևույթ չի եղել այնքան նշանակալից հայ ժողովրդի համար, ինչպիսին էր պարսկական Թուրքմենչայ գյուղում կնքված պայմանագիրը։ Տիրելով Հայաստանի սրտին, Ռուսաստանը հյուրընկալությամբ բացեց դռները ժամանակի դառնությունից հայրենիքը լքած օտար ափեր ընկած բոլոր հայերի համար։ Գրիգոր Արծրունու կարծիքով, եթե Հայաստանը չմիացվեր Ռուսաստանին և Ռուսաստանը նրան չարթնացներ խոր քնից և լճացումից, ապա մենք կմնայինք այնտեղ, որտեղ էինք հինգ-վեց դար առաջ։ Ս. Պալասանյանը նշում էր, որ Ռուսաստանի կազմում հայ ժողովուրդը տնտեսական և կուլտուրական մեծ առաջադիմության հասավ։ Բաֆֆին Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ համարում էր փրկություն հայերի համար, գտնելով, որ հայերը Ռուսաստանում արևմտահայերի համեմատությամբ տնտեսական և կուլտուրական մեծ առաջընթաց են ապրել։ Մ. Օրմանյանը գրել է, որ հայերը Ռուսաստանի կազմում մեծ առաջընթաց ապրեցին և միայն Երևանում ու Նախիջևանում 60 տարվա ընթացքում, վիճակագրական տվյալների համաձայն, նրանց թիվը աճեց 3 անգամ։

Չնայած ցարական կառավարությունը հետապնդում էր իր դասակարգային շահերը և, ինչպես բոլոր ժողովուրդներին, հայ ժողովրդին ևս ճնշում ու շահագործում էր, և վերջինս չստացավ սոցիալական ու ազգային իսկական ազատություն ու դրան հասավ միայն սովետական կարգերի օրոք, բայց և այնպես Հայաստանի միացումը Ռուսաստանին փրկեց հայ ժողովրդին մասսայական ջարդերից ու ֆիզիկական ոչնչացումից, միջֆեոդալական կռիվներից, կողոպուտից ու ավերածություններից, նրա գլխին կախված ահավոր դամոկլյան սրից։ Իրավացի էր Ֆ. Էնգելսը, երբ նշում էր, որ Ռուսաստանը այդ ժամանակ իրոք պրոգրեսիվ դեր էր խաղում Արևելքի նկատմամբ։

Միացումից հետո երկրամասի տնտեսական կյանքը արագ զարգացում ապրեց և նոր ընթացք ստացավ։ Առևտրական հարաբերությունների աշխուժացումը, միասնական դրամի, չափի ու կշռի ստեղծումը, մաքսային սիստեմի վերակառուցումը, հաղորդակցության միջոցների ընդլայնումը, նոր ճանապարհների կառուցումը և բնական հարստությունների հայտնաբերումը զարգացման նոր հեռանկարներ բացեցին։ Տնտեսական կյանքը դարավոր լճացումից հետո կենդանացավ ու աշխուժացում ապրեց։

Հայկական մարզի ստեղծումը, մի շարք վարչական-դատական ռեֆորմների անցկացումը և վերջապես 1849 թ. Երևանի նահանգի ձևավորումը, վերջ դրեցին վարչա-տերիտորիալ մասնատվածությանը և նպաստեցին երկրի տնտեսական զարգացմանը։ Փոխվեց նախկին հարկային սիստեմը, առևտրի (հատկապես տրանզիտային) զարգացման համար ստեղծվեցին ադեկվատ պայմաններ։

Ռուսաստանում զարգացող կապիտալիստական հարաբերություններն իրենց շրջանակի մեջ առան Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանը։ Կապիտալիզմի զարգացումը հատկապես արագ ընթացավ Ստոլեֆորմյան շրջանում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ տնտեսական զարգացման ուժը Ռուսաստանին մղում էր դեպի կապիտալիզմի ուղին։ Արդեն XIX դ. վերջին խորությամբ ու լայնքով զարգացող կապիտալիզմը ընդգրկում է նաև ծայրամասերը, սկսվում է դրանց տնտեսական յուրացումն ու ազգային շրջանների զարգացումը։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Անդրկովկասը թևակոխում է արդյունաբերական կապիտալիզմի էտապը։ Հայաստանում նոր արդյունաբերական ձեռնարկություններ են ստեղծվում։ 1880 թ. համեմատությամբ պղնձի արտադրությունը 1906 թ. ավելանում է մոտ 33 անգամ։

Զարգանում էր գյուղատնտեսությունը։ 1829—1900 թթ. ցանքատարածությունը Երևանի նահանգում ավելացավ 4 անգամ, ցորենինը և գարունը՝ 6 անգամ, բամբակինը՝ 2։ Այդ ժամանակամիջոցում ցորենի համախառն արտադրանքը ավելացավ 8,8, բամբակինը՝ 5,1 անգամ, անասունների գլխաքանակը աճեց 173,9%-ով։ Արագ զարգացում էին ապրում գինեգործությունը և կոնյակի արտադրությունը։ Վերջինս շուտով համաշխարհային հռչակ է ձեռք բերում։ Բամբակի կուլտուրայի մշակման ընդարձակման հետևանքով զարգանում է նաև բամբակազտիչ արդյունաբերությունը։ 1888 թ. նման ձեռնարկությունների թիվը Երևանի գավառում հասնում էր 60-ի, Էջմիածնի գավառում՝ 70-ի։

Տնտեսական հարաբերությունների զարգացմանը խթանեց ճանապարհաշինությունը, հատկապես Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս (1899 թ.), Ալեքսանդրապոլ—Ուլուխանլու (1902 թ.), ապա Երևան—Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղագծի կառուցումը։ Ընդլայնվեց նաև խճուղիների և կապի այլ միջոցների ցանցը։ Արագորեն աճում էր բնակչությունը։ Քաղաքային բնակչությունը Հայաստանում 1865—1886 թթ. աճեց 130,6%-ով, ամբողջ Անդրկովկասում՝ 177%-ով։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թ. համեմատությամբ ավելացավ 2,5 անգամ։ Եթե Երևանի բնակչությունը 1865 թ. հասնում էր 14 հազարի, ապա 1897 թ.՝ հասավ 29 հազարի, Ալեքսանդրապոլինը՝ 16-ից 32 հազարի։ Արագ աճում էր բանվոր դասակարգը։ 1903 թ. Բաքվի բանվոր դասակարգի 26,9%-ը հայեր էին։ Հայաստանում XX դ. սկզբին ֆաբրիկա-գործարանային բանվորների թիվը հասնում էր 10 հազարի։

Թեև Հայաստանը ցարիզմի օրոք մնում էր իբրև տնտեսապես հետամնաց, ագրարային ծայրամաս, բայց և այնպես սկսված տնտեսական տեղաշարժերը պրոգրեսիվ նշանակություն ունեցան և խոր ազդեցություն թողեցին հայ ժողովրդի կուլտուրական կյանքի և քաղաքական մտքի զարգացման վրա։ Նկատելի տեղաշարժեր կատարվեցին կուլտուրական կյանքի բնագավառում։ Ռուսաստանի կազմում ակնառու էր հայ կուլտուրայի և հասարակական-քաղաքական մտքի զարգացումը։ Հայ ժողովուրդը սկսեց շփվել ռուս ժողովրդի առաջավոր կուլտուրայի հետ, հարյուրավոր հայ երիտասարդներ ուսում էին ստանում Ռուսաստանի կարևոր կենտրոններում։

Ռուսական առաջադեմ կուլտուրայի և հեղափոխական գաղափարների ազդեցությամբ ասպարեզ իջան տասնյակ ու տասնյակ հայ գրողներ, գիտնա-

կաններ, հասարակական և քաղաքական գործիչներ։ Հայ կուլտուրայի զարգացմանը մեծ թափ հաղորդեց կուլտուրական այնպիսի օջախների ստեղծումը, ինչպիսիք էին Լազարյան ճեմարանը Մոսկվայում, Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում, Երևանի ուսումնարանը և բազմաթիվ գավառային այլ ուսումնարաններ տարբեր քաղաքներում։ Ասպարեզ եկավ հայ լուսավորական-դեմոկրատական շարժման մի ամբողջ սերունդ, որի կարկառուն ներկայացուցիչը Խաչատուր Աբովյանն էր։

Արևելահայության մշակութային և հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր խաղաց մամուլը՝ «Հյուսիսափայլը», «Մշակը» և այլ պարբերականներ, որոնց ստեղծումը մեծապես առնչվում էր հայ-ռուսական տնտեսական ու կուլտուրական կապերի զարգացման ու խորացման հետ։

Հայ ժողովրդի առաջավոր մտածողները կոչ էին անում համաքայլ ընթանալ ռուսական կուլտուրայի հետ և յուրացնել այն։ Խաչատուր Աբովյանը, օրինակ, անհրաժեշտ էր գտնում յուրացնել գիտությունները, դաստիարակել երիտասարդության միտքն ու հոգին։ Գ. Սունդուկյանը դեռևս Պետերբուրգի համալսարանում սովորելիս կլանվում է ռուս գրականությամբ, տարվում թատերական արվեստով, հմայվում ռուս հանճարեղ գերասաններ Մարտինովի և Շչեպկինի խաղերով։ Նա գրել է. «Գոգոլի անվան հետ են կապված իմ լավ հիշողություններս։ Այդ անվան հետ ես շատ բան եմ պարտական թատրոնի հանգեպ տածած իմ սիրո համար»։ Ս. Նահազիզը առաջին հայ պոետն էր, որ գովերգեց Պուշկինի տաղանդը և նշեց, որ ինքը այն հայ երիտասարդներից է, որ ուշադիր հետևում է ռուսական պարբերականներին և հատկապես «Սովրեմեննիկին» ու նրա մեջ արծարծվող հարցերին։ Ռուս դեմոկրատական մամուլը վերափոխող և հայ երիտասարդությանը նոր գաղափարներ սնուցողի դեր էր կատարում։ Խոսելով իր վրա ռուս գրականության թողած ազդեցության մասին, Հովհ. Թումանյանը նշում էր. «ռուս բանաստեղծները, գլխավորապես Պուշկինը և Լերմոնտովը միշտ էլ ինձ հարազատ ու մոտ են թվացել... Ռուս բանաստեղծներն ինձ տվել են մինչև անգամ պոեմայի բուն ձևը, որպիսին կրում են իմ ստեղծագործություններից շատերը»։ «Սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ,— ասում էր նա,— ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև... որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»։ Բանաստեղծ Ալ. Ծատուրյանը, ընդգծելով ռուս գրականության հմայքն ու պատմական դերը, նշում էր, որ դժվար է ցույց տալ որևէ հայ գրողի, որ կլանված չլինի այդ հմայքով։ «Իմ համեստ քնարը,— գրում է նա,— շատ ու շատ բաներով պարտական է այդ ազդեցությանը»։ Վիպասան Նար-Դոսը նշում է, որ ինքը շատ բանով պարտական է ռուսական գրականությանը։ Նա ռուս արձակագիրներին ավելի բարձր էր դասում, քան մյուս բոլոր ժողովուրդների պատմողական ստեղծագործությունները։ Բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ հայ պոեզիան սնվել և սնվում է ռուս գրականության շտեմարանից, և գիտելիքների ծարավ Ռուսաստանի հայ բնակչությունն էլ դաստիարակվում է այդ գրականությամբ։ Ռուս կուլտուրայի և գրականության դերը բարձր էր դասում նաև Լեոն։ Նա նշում էր, որ ռուս գրականությունը համաշխարհային գրականության մեջ այնպիսի պատվավոր տեղ է գրավել, որ այն սկսել են ուսումնասիրել քաղաքակրթված աշխարհի բոլոր անկյուններում։ 1888 թ. Մ. Արամյանին հղած նամակում նա

դրում էր, որ ինքը կլանված է ռուս գրականության մի ուղղությամբ, որը օր-օրի վրա հարստանում է և շուտով առաջ կանցնի շատ ազգերի դրականությունից։ Բավական է հետևել արևելահայ գրականության զարգացման ընթացքին, գրում էր Լենն, որպեսզի համոզվենք այն հզոր ազդեցության մեջ, որ ցույց են տալիս ռուս գրողները։ «Ինձ համար պարզ է, որ եթե ես կարողացել եմ որոշակի աշխարհայացք մշակել, յուրացնել էսթետիկայի հիմունքները, ապա դրանով պարտական եմ ռուս գրողներին։ Ռուսական խոսքի վարպետների հրաշալի տրադիցիաները սրբազան են ինձ համար այժմ և ընդմիշտ»։ Հայ բեմի մեծ վարպետ Վ. Փափազյանը ընդգծում էր, որ իր արվեստը թրծվել է ռուսական կուլտուրայի մեծ քուրայում։ «Գիտեմ,— գրում էր նա,— որ իմ հարազատ հայ ժողովրդի սիրտը բաբախում է մեծ և փառահեղ ռուս ժողովրդի հետ մեկտեղ»։

Ինչ խոսք, որ հայ գրականությունը և կուլտուրան, ունենալով պատմական հարուստ ավանդույթներ ու զարգացման ուրույն գիծ, լավագույն կերպով արտացոլել են հարազատ ժողովրդի կյանքն ու ազատագրական պայքարը։ Այդ հատկապես նշել են Մ. Գորկին, Վ. Բրյուսովը և ուրիշ շատ ականավոր դեմքեր։ Բրյուսովը, օրինակ, ընդգծում էր, որ հայերը իրենց «հազարամյա պատմական կյանքում ստեղծել են ինքնուրույն կուլտուրա, իրենց լուման են դրել գիտության մեջ և հարուստ գրականություն են թողել աշխարհին»։ Եվ ահա այդ գրականությունը կարողացավ սինթեզել իր մեջ ռուս կուլտուրայի առաջավոր գծերը և զարգացման նոր, ավելի հարուստ ընթացք ապրել։ Սերտ կապը ռուս գրականության ու կուլտուրայի հետ հայ կուլտուրան, արվեստն ու գրականությունը բարձրացրեց զարգացման նոր աստիճանի։ Հատկապես նոր որակ ստացավ հումանիզմի, ազատագրական-հեղափոխական պայքարի գաղափարը, հանդիսանալով առաջընթացի մեծ ուժ։

Մեծ Լենինը գտնում էր, որ «յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ կա երկու ազգային կուլտուրա։ Կա Պուրիշկևիչների, Գուչկովների և Ստրուվեների վելիկոռուսական կուլտուրա, սակայն կա նաև Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով բնորոշվող վելիկոռուսական կուլտուրա»։ Հայ ժողովուրդը հաղորդակից դարձավ ռուսական առաջավոր, հեղափոխական-դեմոկրատական կուլտուրային, ռուսաց լեզվին և նրա միջոցով համաշխարհային կուլտուրայի հարուստ գանձարանին։

Այսպիսով՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում պատմական համեմատաբար կարճ ժամանակաշրջանում տնտեսական ու կուլտուրական զգալի հաջողության հասավ։ Իսկ ի՞նչ վիճակում էր մեր ժողովրդի մյուս հատվածը, որը մնում էր թուրքական լծի տակ։ Հայ ժողովրդի այդ երկու հատվածների դրության բաղդատումը ավելի ակնառու է դարձնում Ռուսաստանի փրկարար դերը մեր ժողովրդի կյանքում։

Պատմական իրադրությունների բերումով Արևմտյան Հայաստանին բախտ չվիճակվեց մտնելու Ռուսաստանի կազմի մեջ։ Եվ ահա, նույն ժողովուրդը երկու հատվածի բաժանվելով, գտնվում էր տարբեր պետությունների՝ հետամնաց, ռազմաֆեոդալական թուրքական դեսպոտիզմի և անհամեմատ առաջադեմ, կապիտալիզմի ուղիով զարգացող Ռուսաստանի կազմում։ Թուրքիայում հայ ժողովուրդը, որի թիվը XIX դ. առաջին կեսին հասնում էր 2,5 միլիոնի, շարունակում էր տառապել հետամնաց, քարբարոսական պայման-

ներում։ Այնտեղ մարդու կյանքը շարունակ վտանգի էր ենթակա։ Մինչդեռ Ռուսաստանի հովանու տակ հայ ժողովրդի գլխին կախված ֆիզիկական ոչընչացման վտանգն անհետացավ, տեղի ունեցավ հայ ժողովրդի միավորում, տնտեսական ու կուլտուրական առաջընթաց։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ուղենիշ հանդիսացավ ողջ հայության համար։ Արևմտահայերը ևս իրենց հայացքը ուղղեցին դեպի Ռուսաստան, տեսնելով նրանում այն ուժը, որ կարող է ազատագրել իրենց թուրքական լծից։ Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ Էրզրումի, Արարկիրի, Բայազետի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների հայերը բազմիցս համախոսականներ են հղել ռուսական կառավարությանը, նրա հովանու տակ անցնելու ցանկությամբ։ Թուրքական լծից ազատագրվելու համար հայ ժողովուրդը ազատագրական պայքարի դրոշ պարզեց և հերոսական պայքարի փառավոր էջեր գրեց։

Այդ պայքարն ուներ սոցիալ-տնտեսական և քաղաքական խոր արմատներ։ Ծանր հարկերը, անօրեն էկզեկուցիան, պետության կողմից հովանավորվող ավազակային խմբերի մշտական հարձակումները շարունակ սարսափի մեջ էին պահում հայ շինականին, նրա գույքն ու կյանքը վտանգի ենթարկում։ Այս պայմաններում հայ գյուղացին աղերսում էր այս կամ այն տերության դեսպանի հովանավորությունը կամ էլ դիմում ապստամբության, զենքով պաշտպանելու իր վտանգված կյանքն ու պատիվը։

1862 թ. Զեյթունի ապստամբությունը ցնցող տպավորություն թողեց և միջազգային դիվանագիտության ուշադրությունը հրավիրեց հայկական հարցի վրա։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ազատագրական պայքարը նոր թափ ու ընթացք ստացավ։ Երևանի, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Ելիզավետպոլի հայ բնակչությունից կազմված մարտական ջոկատները ջանք չէին խնայում օգնելու ռուսական բանակին։ Հայ բնակչությունը հանձինս ռուսական բանակի տեսնում էր իր ազատարարին, օգնում նրան մթերքներով, փոխադրական ուժով և անհրաժեշտ բոլոր միջոցներով։

Պատերազմից հետո Կարսը և մի շարք այլ շրջաններ միացան Ռուսաստանին։ Սակայն արևմտյան տերություններն իրենց գաղութատիրական քաղաքականությամբ ամեն կերպ խոչընդոտում էին հայկական շրջանների միացումը Ռուսաստանին։ Մի կողմից նրանք «հայկական հարցը» որպես «արևելյան հարցի» բաղկացուցիչ մաս օգտագործում էին Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար, մյուս կողմից, Թուրքիայի ամբողջությունը պաշտպանելու պատրվակով ցանկանում էին պատնեշ ստեղծել Ռուսաստանի առաջ և արգելակել նրան՝ առաջանալու դեպի Մերձավոր Արևելք։ Դրա հետևանքով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի համաժողովում 1878 թ. վերածվեց 61-րդ հոդվածի։ Այդ հոդվածը պարտավորեցնում էր Թուրքիային հայկական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնել՝ հայերի վիճակը բարելավելու և նրանց անվտանգությունը ապահովելու համար։ Սակայն, ի տարբերություն Սան-Ստեֆանոյի պայմանագրի, դա պետք է կատարվեր առանց ռուսական զորքի վերահսկողության, սուլթանի կամքով։ Իրականում, Աբդուլ Համիդի ռեժիմի պայմաններում հայ բնակչության վիճակը Թուրքիայում ավելի ծանրացավ։ Արևմտյան տերությունների թողտվության պայման-

ներում այլասերում սուլթանը սկսեց հայկական հարցը «լուծել» հայ բնակչությունը ոչնչացնելու և բռնի ուժով հավատափոխ անելու ուղիով։

Կեղծելով փաստերը, սուլթանական կառավարությունը ձգտում էր «ապացուցել», որ հայ բնակչությունը արևելյան վիլայեթներում փոքրամասնություն է կազմում և, հետևապես, Ռուսաստանի պահանջով ռեֆորմներ անցկացնելու կարիք չկա։ Սակայն բռնությանը չենթարկվելու ոգին և հավատը դեպի մեծ Ռուսաստանի օգնությունը Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժման նոր ալիք բարձրացրին։ 1878 և 1884 թթ. դեյթունցիները նորից դիմեցին զինված ապստամբության։ 1880 թ. ապստամբություն բռնկվեց Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում և այլ վայրերում։ 1886 թ. Վանի ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ 1895—1896 թթ. թուրք բռնակալները սրի ու հրի միջոցով ոչնչացրին ավելի քան 300 հազար հայերի։

Մարքսիզմի կլասիկները նշել են, որ միջին դարերից սկսած՝ թուրքական արշավանքների ու բռնությունների պատճառով «վտանգ էր սպառնացել ամբողջ եվրոպական զարգացմանը»։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանում արևմտյան տերությունների իմպերիալիստական խարդավանքների և թուրքական կառավարության մարդակուլ քաղաքականության զոհը դարձավ։

Ակնառու փաստեր են սրանք, որ ցույց են տալիս Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների զարգացման տարբեր ուղիներն ու նրանց պատմական բախտի հակադիր ասպեկտները, հավաստելով Ռուսաստանի փրկարար դերը հայ ժողովրդի կյանքում։ Այս վերջին տեսանկյունից պատմական հայացք ձգելով հեղափոխական Ռուսաստանի պատմական դերի վրա, շարունակ պետք է ղեկավարվել երկու Ռուսաստանի լենինյան բնորոշումով՝ մի կողմից ցարական ռեակցիա և մյուս կողմից՝ առաջավոր, ռուս ժողովրդի Ռուսաստան։ Դեմոկրատական, հեղափոխական Ռուսաստանի հետ կապվեց մեր ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության խնդիրը։

Արովյանը դեմոկրատական Ռուսաստանի հետ էր կապում հայ ժողովրդի ապագան։ Հայ իրականության մեջ Չերնիշևսկու զարգացրած հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ամենաականավոր ներկայացուցիչ Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի բախտը կապում էր հեղափոխական Ռուսաստանի, ռուսական հեղափոխության հետ։ «Ռուսիո ազատությունը,— գրում էր նա,— ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի»։ Դա իրոք հանճարեղ կանխատեսում էր։ Սոցիալական և ազգային ազատագրության պայքարի պատգամներին հարազատ հայ աշխատավոր ժողովուրդը ռուսական հեղափոխական պայքարի ոլորտի մեջ կոփվեց և նոր աշխարհ ստեղծող բանակի մարտիկը դարձավ, ապրելով քաղաքական կյանքի հսկայական թռիչք։

Բուրժուական հարաբերությունների զարգացումը ֆեոդալական կարգերի մնացուկների պայմաններում սրում էր սոցիալական հակասությունները, դասակարգային պայքարը։ Գյուղացիական ռեֆորմից հետո տնտեսական առաջընթացը, կապիտալիզմի զարգացումը անհամեմատ ավելի արագ էր ընթանում։ Եվ, այսուհանդերձ՝ Հայաստանը մնում էր հետամնաց գյուղացիական երկիր։ Աշխատավոր մասսաները ճնշվում էին թե՛ տեղական շահագործողների և թե՛ ցարական չինովնիկների կողմից։ Անասուններից և աշխատանքի միջոցնե-

րից դուրկ գյուղացիությունը ապրուստի միջոցներ գտնելու համար դիմում էր արտադնացության, համալրում բանվոր դասակարգի շարքերը։ Նման պայմաններում հայ աշխատավոր մասսաները դառնում են Ռուսաստանում աճող հեղափոխական շարժումների մասնակից, այն երկրի հեղափոխական շարժումների, որը դարձել էր հեղափոխության կենտրոն։ 1877 թ. Մարքսը Զորգեին գրած նամակում նշում էր, որ Ռուսաստանում հեղափոխության համար հասունացել են բոլոր պայմանները և որ հեղափոխության կենտրոնը Արևմտյան Եվրոպայից տեղափոխվում է Ռուսաստան. «Հեղափոխությունը այս անգամ կսկսվի Արևելքում»։

Հայ ժողովրդի խոշորագույն նվաճումը ռուսական հեղափոխական պայքարի ակտիվ մասնակից լինելն էր, լենինյան վեհ գաղափարների հաղթանակի համար մարտնչելը։ Դեռևս XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայ մտավորականության մի ամբողջ սերունդ դարձավ ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժման առաջնորդ Վ. Ի. Լենինի հետևորդն ու գաղափարակիցը։ Այդ սերնդի ականավոր ներկայացուցիչներն էին Իսահակ Լալայանցը, Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, Մելիք Մելիքյանը, Արշավիր Մելիքյանը, Սարգիս Կասյանը, Ասքանազ Մռավյանը և շատ ու շատ ուրիշներ։ Դարեվերջին Ստ. Շահումյանը հիմնադրեց Ջալալօղլու մարքսիստական խմբակը։ 1902—1905 թթ. սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին Ալեքսանդրապոլում, Երևանում, Կարսում, Սարիզամիշում, Նոր Բայազետում, Ղափանում և այլ վայրերում։ Խոշոր երևույթ էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը, որն արժանացավ Վ. Ի. Լենինի բարձր գնահատականին։

Ռուսական առաջին հեղափոխությունը քաղաքական պայքարի ու հասարակական մտքի զարգացման նոր աստիճանի բարձրացրեց բոլոր ճնշվածներին, այդ թվում նաև հայ աշխատավորներին։ Հեղափոխությունը կյանքի կոչեց հասարակական բոլոր խավերին. բանվորական գործադուլները Ալավերդում, Ղափանում, Ալեքսանդրապոլում, գյուղացիական ելույթները Հաղպատում, Բայազետում, Զանգեզուրում և այլուր ցույց տվեցին, որ հայ աշխատավորությունը աներեր ընթանում է ռուսական հեղափոխության ուղիով։

Հայ լենինյանները սրբությամբ պաշտպանում էին ռուսական հեղափոխության գաղափարները, պայքարում դրանց հաղթանակի համար։ 1902 թ. Ստ. Շահումյանը իր ելույթներից մեկում նշում էր, որ նա խոսում է սովորող այն հայ երիտասարդության անունից, որը զինված է նոր աշխարհայացքով, թրծված է ռուսական նորագույն հեղափոխական ավազանում։ Պայքարի դրոշ պարզելով մարքսիզմի թշնամիների դեմ, նա պահանջում էր այդ պարոններին մերկացնել ոչ միայն նրա համար, որ նրանք վարկաբեկում էին մարքսիզմի մեծ ուսմունքը, այլև այդ պետք է անել նաև հանուն գրական բարքերի մաքրության ընդհանրապես, հանուն Բելինսկու և Չերնիշևսկու գրական սրբազան ավանդների պահպանման։ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը կրքոտությամբ պաշտպանում էին Մ. Գորկու գրական ժառանգությունը, այն համարելով պրոլետարական կարմիր գրականություն։

Ռուսաստանի կազմում հայ ժողովուրդը մասնակից դարձավ Վ. Ի. Լենինի գլխավորած հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժմանը, որը

հանգեցրեց կապիտալիզմի տապալմանը ու սոցիալիստական կարգերի հաղթանակին։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը նոր դարաշրջանի սկիզբը դրեց, բոլոր ճնշվածների համար նոր ուղի բացեց։ Սակայն Անդրկովկասի ազգայնական կուսակցությունների և իմպերիալիստական տերությունների հակասովետական քաղաքականության հետևանքով երկրամասում անմիջապես չպարզվեց մեծ Հոկտեմբերի դրոշը։ 1918—1920 թթ. օտար և սեփական ճընչողների լծի տակ հայ ժողովուրդը կանգնեց ծանր ճգնաժամի առջև։ Դաշնակցական բախտախնդիրների անփառունակ իշխանությունը երկիրը հասցրեց կատարյալ քայքայման ու անկման։ Ժողովրդի բուռն ցասումի օրինական արտահայտությունն էր 1920 թ. Մայիսյան ապստամբությունը, որը արյան մեջ խեղդվեց դաշնակցական խմբապետների կողմից։ 1920 թ. սեպտեմբերին սկսվեց թուրք ջարդարարների ներխուժումը Հայաստան։ Գրավելով Արևելյան Հայաստանի զգալի մասը, զավթիչները նոր ահավոր վտանգ ստեղծեցին հայ ժողովրդի գոյության համար։ Անտանտան ցանկանում էր առիթը օգտագործել և գրավել ողջ Անդրկովկասը։ Հայաստանը կտրելով Սովետական Ռուսաստանից, դաշնակցական վայ-ղեկավարները հայ ժողովրդին կանգնեցրին անդունդի եզրին։

Նորից Ռուսաստանն էր, որ օգնության հասավ հայ ժողովրդին։ Այս անգամ արդեն վերածնված նոր Ռուսաստանը։ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1920 թ. հոկտեմբերի 5-ին Հայաստանում Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին հեռադրում է, որ «Հայաստանը վերջին ժամանակներս ավելի ու ավելի է վերածվում Անտանտայի հարձակողական քաղաքականության գործիքի։ Բայց մենք թույլ չենք տա, որ նրան ոչնչացնեն»։ Ս. Օրջոնիկիձեն Կովկասյան ճակատի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ Տրիֆոնովին հայտնում էր, որ Սովետական Ռուսաստանը կմիջնորդի Հայաստանը փրկելու համար։

Օրհասական վիճակում գտնվող հայ ժողովուրդը անհամբեր սպասում էր այդ փրկությանը։ 1920 թ. հոկտեմբերին Շամշադինից մի խումբ գյուղացիներ գրում էին. «Պետք է հավաքենք մեր ուժերը և նորից ընդհարվենք ավազակ կառավարության հետ, վերջնականապես տապալելու նրան»։ Մի այլ թղթակցության մեջ, որը տպագրվել է Բաքվի «Կոմունիստ» թերթում, հայտնվում էր, որ «ժողովուրդը կանչում է միաբերան՝ երբ է հաստատվելու մեր երկրում խորհրդային իշխանություն, երբ է Կարմիր բանակը մեզ օգնության գալու»։ 1920 թ. մայիսի վերջին XI Կարմիր բանակի ներկայացուցիչ Ի. Նեչաևը գաղտնի կերպով լինում է Շամշադինի գյուղերում և հրամանատարությանը ներկայացրած զեկուցագրում ցույց տալով հայ գյուղացիների ատելությունը դեպի դաշնակցականների կառավարությունը, գրում է. «Անցնելով Աչասու, Կարադաշ, Մելիքեն գյուղերով, ես ականատես եղա հսկայական հեղափոխական բռնկման, որը ընդգրկել էր նշված գյուղերի ամբողջ բնակչությանը»։ Նրանց միայն հետաքրքրում էր մի հարց,— շարունակում է Ի. Նեչաևը. «Ճի՞շտ է արդյոք, որ նրանց թիկունքում գտնվում են Կարմիր բանակի զորամասերը, ճի՞շտ է արդյոք, որ նրանք իրենց կողմն են։

Եթե մեզ հետ լինեն ռուս կարմիրբանակայինները, մենք վստահ կլինենք հաղթանակում։ Հարկավոր չէ, որ նրանք կռվեն մեզ համար, միայն հարկա-

վոր է տեսնել նրանց և համոզվել, որ նրանք իրոք որ մեզ հետ են»։ Այստեղից ակնհայտ է, որ հայ գյուղացու համար ռուսների հետ լինելու համոզմունքն արդեն հաղթանակի երաշխիք էր։

Հայ ժողովրդին օգնության հասավ XI Կարմիր բանակը։ Հայաստանում հաղթանակեց սովետական իշխանությունը, որը փառավոր էջ բացեց հայ ժողովրդի կյանքում, նոր դարագլխի սկիզբ հանդիսացավ։

Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 2-ին ողջունելով սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում, հույս էր հայտնում աշխատավոր մասսաների եղբայրական համերաշխություն ստեղծելու վերաբերյալ։

Փրկվեց Հայաստանը իմպերիալիստական պետությունների ճիրաններից և նրանց ձեռքին գործիք դարձած դաշնակների տիրակալությունից։

Եվ ապրեց Հայաստանը Սովետական Ռուսաստանի օգնության և ամենաջերմ աջակցության շնորհիվ։ Հայաստանում այդ ժամանակ եղած չնչին արդյունաբերական ձեռնարկությունները կանգ էին առել, գյուղատնտեսությունը կատարյալ քայքայման էր հասել։ Տասնյակ հազարավոր որբեր ու գաղթականներ սովի էին մատնված։ Վ. Ի. Լենինի ցուցումներով անհապաղ օգնություն կազմակերպվեց։ 1920 թ. դեկտեմբերի 5-ին Ս. Օրջոնիկիձեն Բաքվից հաղորդում էր, որ Հայաստանի համար 40 վագոն մթերք է ուղարկվում։ Վ. Ի. Լենինը ընդունելով հեղկոմի անդամներ Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին, անմիջապես լուծեց մի շարք կենսական խնդիրներ։ Բաց է թողնվում մեծ քանակությամբ դրամ և անհրաժեշտ մթերքներ։ Ս. Տեր-Գաբրիելյանը 1921 թ. հունվարի 15-ին հայտնում է Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին, որ Մոսկվայում շտապ միջոցներ են ձեռնարկվում լենինյան ցուցումները իրականացնելու համար։ Լուծվեց 2 միլիոն արշին կտորեղենի և ամսական 200—250 հազար փութ հաց ստանալու պահանջը, ինչպես նաև Լազարյան ճեմարանի գրադարանը Հայաստան տեղափոխելու խնդիրը և այլ հարցեր։ Այդ օրերին Հայաստան ուղարկվեց նաև մեծ քանակությամբ դեղորայք, թուղթ, մեկ վագոն դրականություն։ Միջոցներ ձեռնարկվեցին ՌՍՖՍՀ գյուղատնտեսության ժողկոմատից սերմացու և գյուղատնտեսական գործիքներ, իսկ Ուկրաինայից շաքար ստանալու համար։

Առաջին իսկ օրից սովետական հանրապետությունները եղբայրական օգնության ձեռք մեկնեցին մեկը մյուսին։ Եղբայրական Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը 1920 թ. դեկտեմբերի 1-ին ողջունելով սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, հայտարարեց, որ Սովետական Ադրբեջանը պատրաստ է իր դռները լայնորեն բացելու Սովետական Հայաստանի առջև, օգտվելու նրա բոլոր բարիքներից։ «Կարմիր Աստղ» թերթի հաղորդմամբ «Երկու օրվա ընթացքում Բաքվի բանվորները Սովետական Հայաստան են ուղարկել երկու գնացք նավթ և կտորեղեն»։ Միայն 1920 թ. դեկտեմբերին Բաքվից Հայաստան ուղարկվեց 48 ցիստերն նավթ, 50 վագոն հացահատիկ։ «Կոմունիստ» թերթը 1921 թ. հունվարի 3-ին հաղորդում էր, որ Հայաստան ուղարկված 28 վագոն հացահատիկը և 7 ցիստերն վառելիքը արդեն ստացված է Ղարաքիլիսայում։ Միայն 1922 թ. Ադրբեջանի կառավարությունը Հայաստան է ուղարկել 1 միլիոն 172 հազար փութ վառելանյութ և այլ մթերքներ։

Հսկայական էր Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին, և դա այն պահին, երբ Ռուսաստանն ինքը մեծ կարիքների մեջ էր։ Ժամանակի բոլոր գժվարություններր հաղթահարվեցին շնորհիվ ժողովուրդների լենինյան բարեկամության, անշահախնդիր փոխադարձ օգնության։ Մեծ Լենինի հանճարեղ մտքի թելադրանքով սովետական ժողովուրդները միավորվեցին կուռ միասնությամբ ստեղծված պետության մեջ։ Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին հղած նամակում 1921 թ. ապրիլի 14-ին հույս էր հայտնում, «որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամական կապերով միավորվելու խնդիրը միշտ էլ եղել է Վ. Ի. Լենինի ուշադրության կենտրոնում։ Դեռևս 1913 թ. Վ. Ի. Լենինը խոսելով ռուս, վրացի, հայ և ադրբեջանցի բանվորների համատեղ աշխատանքի մասին, նշում է, որ դա ոչ թե ֆրազ է, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Անդրկովկասի կոմունիստները սրբությամբ կատարեցին լենինյան պատգամները, ստեղծեցին այնպիսի ազգային համերաշխություն, որը չի եղել և չի կարելի պատկերացնել բուրժուական կարգերի օրոք։

Ս. Օրջոնիկիձեն 1921 թ. ապրիլի 9-ին Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի պլենումում ունեցած իր ելույթում նշում էր, որ Վ. Ի. Լենինը «ցուցում է տվել սովետական հանրապետությունների միավորման անհրաժեշտության մասին, և որ այդ միավորումը պետք է լինի տեսական»։ Վ. Ի. Լենինը Ս. Օրջոնիկիձեին հղած հեռագրում նորից անդրադառնալով այդ խնդրին, գրում էր. «Համառորեն պահանջում եմ ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան...»։

Սովետական կենարար կարգերի պայմաններում, կոմունիստական կուսակցության լենինյան ինտերնացիոնալիստական գաղափարները հաղթանակեցին, ստեղծվեց ժողովուրդների բարեկամություն ու միասնություն, բարեկամություն, որը դարձավ կոմունիստական շինարարության և մեր առաջընթացի կարևոր շարժիչ ուժերից մեկը։ Եվ այժմ, հավատարիմ մնալով լենինյան պատգամներին, մեր հարազատ կոմունիստական կուսակցությունը, նրա Կենտկոմի ղեկավարությամբ, ջանք չի խնայում ամրապնդելու խաղաղությունը, համերաշխությունն ու ժողովուրդների բարեկամությունը։

Սովետական մեծ Միության եղբայրական հարազատ ընտանիքում Հայաստանը վերածնվեց և դարձավ բարձր կուլտուրայի ու գիտության, ծանր ինդուստրիայի և առաջավոր տեխնիկայի երկիր։ Այդ հետևանք էր այն բանի, որ Հայաստանին բախտ էր վիճակվել լինել Ռուսաստանի կազմում, մասնակցել լենինյան դարի հեղափոխական մեծ վերափոխումներին, Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի ներքո ձեռք բերել դարերի ընթացքում երազած սոցիալական ու ազգային ազատությունը և ապրել իր իսկական վերածնունդն ու առաջընթացը։ Ահա թե որն է ռուս ժողովրդի, նրա հեղափոխական պրոլետարիատի, մեծ Լենինի հիմնադրած կոմունիստական կուսակցության պատմական դերը հայ ժողովրդի կյանքում։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹԵՄԱՆ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Շ. Մ. ՄՈՒՂՆԵՑՅԱՆ

Վահան Տերյանը իրավացիորեն նշել է, որ հայ գրականության ամենաբնորոշ մի առանձնահատկությունը եղել և մնում է «ազգային գոյության սևեռումը»։ Սա բացատրվում է դարեր շարունակ մեր ժողովրդի մղած գոյապայքարով։ Իսկ գրողին առաջին հերթին զբաղեցնում է հարազատ ժողովրդին ամենից շատ հուզող հարցը։ Հայրենիքի թեման ներշնչման ամենակենսատու աղբյուրն է։ «Այդ զաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը...»[1]։ Բացառություն չէ նաև լիբանանահայ ետպատերազմյան գրականությունը, որտեղ առաջնայինը շարունակում է մնալ հայրենիքի պատմական բախտի փիլիսոփայությունը, հայապահպանման թեման։

Լիբանանահայ ետպատերազմյան գրականության ամենաարժեքավոր գործերի հիմնական ատաղձը հայրենիքն է։ Այդ զաղափարն առաջադեմ գրողների մտահոգությունների հիմքն է կազմում, նրանց մղում ստեղծագործական վերելքի, ծնունդ է տալիս գեղարվեստական արժեքների։ Սովետական հայրենիքը մշուշների երազային անորոշությունից հառնող փաստացի իրականություն էր արդեն նույնիսկ նրանց համար, ովքեր իրենց հրամցված մտացածին տեղեկությունների հիման վրա տասնամյակներ շարունակ կասկածով էին խորհել նրա գոյության մասին։ Ամենայն հայոց վերածնված ոստանը իրական ու շոշափելի դրսևորումներով իր գիրկն էր կանչում պանդուխտին, և պոռթկում էր վերջինիս դարերով ամբարված կարոտի ու սիրո երգը.

Հոգիս ամբողջ իմ սիրտիս մեջ, ու սիրտիս զա՜րկն իմ բառերուս,
Բիբերուս մեջ կանթեղելով հազարներու հավատքն ու հույս,
Ես՝ անծանոթ այլ հարազա՛տ որդիդ՝ բախտեն հալածական,
Քեզ կկանչեմ, քեզ կորոնեմ, մորմեն խլված մանկա՜ն նման...
Լսե՜, Երևա՛ն, խոսե՜, Երևան[2]։

1945 թ. գրված այս տողերը պարզորոշ արտացոլում են ոչ միայն Վահե Վահյանի դավանանքը, պատկերացում տալիս նրա ռեալիստական աշխարհըմբռնման, Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, վերջինիս դերի բարձր զգացողության մասին, այլև սփյուռքահայ առաջադեմ զանգվածների սրբագործված զգացմունքների, նրանց վառ հույսերի ու երազների իրականացման գիտակցված ապացույցն են։ Սովետական Հայաստանը գործնականորեն հաստատեց այն ճշմարտությունը, որ ժողովրդի կյանքի

---

1 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 251։
2 Վահե Վահյան. Ոսկի կամուրջ, Երևան, 1958, էջ 45։